№ 177 ՈՒՐԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24 **1899** ՈՒՐԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24 № 177

ՔԱՍԱՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և ազգ օրերից)

Բայտարարություն ընդունվում է ամեն լեզուով.

Բայտարարությունների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ի՞նչպէս օգնել.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Պետերբուրգից. Նամակ Գանձակի գաւառից. Նամակ Խմբագրության. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գէորգեան ճեմարան.

Ի՞ՆՉՊԷՍ ՕԳՆԵԼ

Ընթերցողի ուշադրությունը այս անգամ դարձնում ենք այն բանասիրական յօդուածի վրա, որ տպվեց «Մշակի» երէկվայ համարում և որ խօսում է մեր գաւառական քաղաքներից մէկի, Սղնախի, անտեսական դրության մասին։ Այդ յօդուածը, ինչպէս հաղորդեց մեզ մեր թղթակիցը, կազմված է հաւաքական ոյժերով. ամառը Սղնախում հաւաքված մի խումբ երիտասարդներ, տեսնելով իրանց մայրենի քաղաքի յետամնացությունը, աղքատությունը, որ տարէցտարի սաստկանում է, փորձեցին միասին խորհրդակցել երևոյթի պատճառների մասին և որոշել թէ ինչ կարելի է անել՝ այդ դրությունից ազատվելու համար։ Այսքանն էլ բաւական է, որ մենք համակրությամբ վերաբերվենք այդ գործին, որքան էլ նա զուրկ լինի խոր և մանրամասն ուսումնասիրության հանգամանքներից։

Մեր գաւառների մասին մտածող չը կայ. տարվայ ամենամեծ մասը, համարեա ինն ամիս, գաւառը մեռած է, և միայն ամառնային արձակուրդներին հաւաքվում են այդտեղ ինտելիգենտ տարրեր, որոնք չարն ու բարին հասկանալու ընդունակություն ունեն։ Տասնեակ տարիների ընթացքում «Մշակը» պահանջում էր, որ ինտելիգենցիան գաւառներում իր պարտքը ճանաչէ, մեռած ու անզգայ չը մնայ, այլ ուսումնասիրէ իր շրջապատը, կենսական հարցերի լուծումը որոնէ. իսկ ուսանող երիտասարդությունից մենք պահանջում էինք՝ ամառնային արձակուրդները, այն երկար ժամանակամիջոցը, որ նա անց է կացնում իր հայրենիքում, գործադրել օգտաւէտ կերպով, այսինքն մտաբնակ ժողովրդին, իմանալ նրա կարիքները և մտածել, թէ ինչ կարելի է անել։ Աւելորդ է բացատրել, թէ ձեռնհաս ոյժերի այդպիսի գործունէությունը որքան կարևորություն ունի մեր կեանքի մէջ։ Մեր գաւառը օրէցօր ընկնում է, նրա տնտեսական դրությունը գնալով հիւանդոտ, սպառնալից կերպարանք է ընդունում։ Սա մի ընդհանուր երևոյթ է. մենք այսքանը գիտենք, մենք, որ կարդում ենք գաւառական թղթակիցների միանման գանգատները, ողբերը։ Եւ սակայն ողբերով ու հառաչանքներով ոչինչ չի փոխվի արեգակի տակ. քաղցածությունից լաց լինելը մանուկներին է միայն օգնում։ աշխարհի մէջ ոչ մի օրէնք չը կայ, որ խրախուսէր առողջ ու ընդունակ տղամարդի լալկանությունը։ Ընդհակառակն, խիստ, անողոք օրէնք է այն, որ ինքը ժողովուրդը իր նախաձեռնությամբ, իր արիւն-քրտինքով պիտի պատրաստէ իր համար կեցության լաւ պայմաններ։

Բայց պէտք է, որ տնտեսապէս տառապող ժողովուրդը հասկանայ իր դրության պատճառները, պէտք է, որ նրա առաջ պարզվի, թէ ինչ կարելի է անել։ Ահա այստեղ պահանջվում է ձեռնհաս ոյժերի աջակցություն, պահանջվում է բարեխիղճ ուսումնասիրություն, որ, վերջապէս, պէտք է մի օր հրապարակից հանէ գաւառական լալկանությունը և դնէ նրա տեղ գիտակցաբար աշխատելու մի ջղուտ և կենսունակ ընդունակություն։

Վերջնենք հենց նոյն Սղնախը։ Մենք ինքներս շատ անգամ ենք հրատարակել թղթակցություններ, որոնք այդ քաղաքի անկումն ու աղքատությունն էին ողբում։ Ի՞նչ կարող էինք հասկանալ այդ ողբերից։—Այն միայն, որ դա մի թշուառ քաղաք է, որ նրա ճակատագիրն է այդպէս առաջ գնալ. ոչ մենք, ոչ էլ ընթերցողը չը գիտէինք, թէ ինչը կօգնէ այդ քաղաքին, որովհետև մեր առջև դրված էր միայն գանգատը ընդհանուր բառերով, ոչինչ չորոշող նախադասություններով։ Բայց երբ լալկանությունը տեղի է տալիս փոքր ի շատէ լուրջ, առնական վերաբերմունքին, երբ հանդէս է գալիս նոյն իսկ թեթև ուսումնասիրություն, այն ժամանակ մենք հասկանում ենք, որ Սղնախը կարող է զարգացնել գիւղատնտեսությունը, կարող է շերամապահություն, ծխախոտագործություն մտցնել իր պարապմունքների մէջ և այդպիսով վերականգնել իր նախկին դրությունը, երբ նա համեմատաբար բարեկեցիկ էր, քանի որ իր ամբողջ գաւառի առևտուրը իր ձեռքում էր պահում։ Հանգամանքները փոփոխվում են, կեանքը ուրիշ ընթացք է բռնում, հանդէս են գալիս ուրիշ պայմաններ. իսկ գաւառական քաղաքը միամիտ նստած է իր տեղում, անցած օրերն է կանչում, իրան յայտնի նախկին դրությունը, որ անդառնալի կերպով չքացել է, յետ դարձնել է երազում։ և որովհետև հրաշքներ մեր արեգակի տակ չեն կատարվում, ամեն բան օրէնքով է ղեկավարվում, ուստի այդ գաւառական քաղաքը իր կատարեալ անօգնականության մէջ մի բան է միայն գտնում—լաց լինել, երեխայի պէս գանգատվել։ Եւ այդպէս անում է մի ազգաբնակություն, որ անապատի մէջ չէ ապրում, որ հարուստ բնությամբ է շրջապատված, հեռաւոր ձեռքի տակ ունի բազմաթիւ անյայտ գանձեր...

Հասկանալի՞ չէ թէ ինչ ենք մենք և ինչ պիտի լինենք։ Մենք լալկաններ ենք, բայց պէտք է որ յամառ աշխատողներ լինենք։ Մենք հայրական աւանդությունների դուրս մի բան չենք տեսնում, բայց հարկաւոր էր որ ժամանակի հոսանքը, հանգամանքները մեզ համար խորթ ու անհասկանալի չը մնային։ Հարկաւոր էր որ մեր բնությունը, մեր հողը շատ մեռ լինէին մեզ և, այսպէս ասած, լեզու առնային ու հասկացնէին մեզ թէ ինչեր ունեն, ինչեր կը տան մեզ և ինչ պայմանով։

Մենք, ի հարկէ, միանգամայն ճիշդ, սխալներից միանգամայն ազատ չենք համարում այն գրուածքը, որ առիթ տուեց մեզ գրելու ներկայ տողերը։ Օրինակ, առաջարկված միջոցների մէջ մենք նկատում ենք փակոմանիություն. այսպէս, գաւառի գինու ամբողջ պաշարը քաղաքում կենտրոնացնելու միտքը մենք համարում ենք վնասակար թէ վաճառող գիւղացու և թէ սպառողների շահերի տեսակէտից։ Բայց այդպիսի պակասությունները մասնաւոր հանգամանքներ են, որոնց հեշտ կարելի է հեռացնել քննադատությունների միջոցով։ Գլխաւորը այն է, որ մեր գաւառները սկսեն մտածել իրանց դրության վրա, հասկանալ որ միայն իրանք կարող են իրանց օգնել։ Նորերումս Աղէքսանդրոպոլի մեր թղթակիցը, նկարագրելով գիւղական սակաւահողությունը, բերքերի պակասությունը, մատնացոյց էր անում մի ահագին տարածություն հող, որ ընկած է անօգուտ, որովհետև ջուր չունի. իսկ ջուր ունենալ հեշտ կարող է և այդ դէպքում անօգուտ հողը կը դառնայ մի շռեմարան ամբողջ գաւառի համար։

Գաւառների տնտեսական նեղ դրության դէմ միջոցներ շատ կան։ Պէտք է միայն նրանց գտնել, պէտք է աշխատել, մտածել։ Բայց մենք նման ենք այն աւանդական ծոյլին, որ մէջքի վրա պառկում էր տանձի ծառի տակ և սպասում էր թէ երբ տանձը ինքն իրան կընկնի նրա բերանը, այն էլ այնպէս, որ կոթը դէպի վեր լինի...

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Այսօր, սեպտեմբերի 24-ին, Կովկաս է մտնում երկրագործության և պետական կալուածների մինիստր Ա. Ս. Երմոլով, որ պիտի մի կարճ ճանապարհորդություն կատարէ մեր երկրում։ Այս առիթով Կովկասեան Գիւղատնտեսական ընկերության պաշտօնական չաքաթաթերթը թւում է մեր այն պակասությունները, որոնք անշուշտ կարժանանան պ. մինիստրի ուշադրության։

ԳԷՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ

(Նրա քանանհինգամեայ յօբելեանի առիթով)

Ամսիս 25-ին էջմիածնում տեղի է ունենալու մի համեստ, բայց մեր կեանքում հաղուադէպ հանդէս—տօնվելու է Գէորգեան ճեմարանի բացման քանանհինգամեակը։ Այս առիթով պարտք ենք համարում մի հաւատօ ակնարկ ձգել նրա հիմնարկության և գործունէության վրա։

Էջմիածնում մի հոգևոր բարձրագոյն դպրոց կամ ճեմարան հիմնելու միտքը նոր չէ—դեռ ածածվելիս է եղել անցեալ դարում, Սիմէօն կաթողիկոսի ժամանակ։ Աւելի շօշափելի է դարձել այս պահանջը ներկայ դարում, և թէ մեր կաթողիկոսները և թէ Կովկասեան կառավարիչները, նկատելով հայ հոգևորականության տգիտությունը՝ անհրաժեշտ են համարել որ էջմիածնում հիմնվի մի հոգևոր բարձրագոյն դպրոց՝ կրթված հոգևորականներ պատրաստելու համար։ Դեռ Ներսէս վարդապետ Աշտարակեցին (յետոյ կաթողիկոս) օրինակ առնելով Մխիթար Սեբաստացու հիմնած վանքը՝ 1813 թուին, Եփրեմ կաթողիկոսի և սինոդի հաճությամբ, հիմնում է էջմիածնում մի փոքրիկ դպրոց «որպէս ստեր իմն... նախատապատրաստական ուսումնարանի վայելչական... ընդհանրական պատրիարգական Աթոռոյ ամենայն Հայոց» [1]. և նոյն տարին մի մասնաւոր նամակում յոյս է յայտնում, որ եթէ «Աստուած հաստատէ 150 քահանայ (75,000 զուրուշ) որ ժառանգեալ հաստատեսցեն վասն 200 տղայոց և չորս լեզուի վարժապետաց կարող լիցուք կանխաւ յառաջացուցանել... ի պատիւ ս. Լուսաւորչին լուսափայլ անուանն և ի պարծանս մայր Աթոռոյն և ազգի» [1]։ Կոմս Պասկեվիչը 1828-ի նոյեմբերին Բլուդով մինիստրին ուղղած ընդարձակ գրության մէջ ի միջի այլոց առաջարկում է. «Հայոց հոգևորականությանը լաւագոյն կրթություն տալու համար հաստատել դպրոցներ և ուսումնարաններ։» [2] 1835 թուին Բարձրագոյն հաստատված պօլժենիայի մէջ վերոյիշեալ ցանկությունները օրինական ձև են ստանում և սահմանվում են իբրև պարտականություն։ Այստեղ գրված է. յօդ. 112. «Լուսաւորչական հայոց եկեղեցու երեխաների կրթության համար աստուածաբանական գիտությունների մէջ՝ էջմիածնի վանքում և Ռուսաստանի հայոց իւրաքանչիւր վիճակում բացվում են հոգևոր դպրոցներ։» Յօդ. 113. էջմիածնի վանքում եղող հոգևոր դպրոցը գտնվում է լուսաւորչական հայոց պարիսպը կաթողիկոսի անմիջական հսկողության տակ, իսկ միւս դպրոցները կախումն ունեն թեմական իշխանություններից։»

Նոյն այս ցանկությունը արտայայտել են թէ մասնաւոր նամակներում և թէ հրապարակով Ստ. Նազարեանց, Աբովեան և ուրիշ նշանաւոր գործիչներ։ Սակայն զանազան հանգամանքներ արգելք եղան էջմիածնում բարձրագոյն հոգևոր դպրոց հիմնելուն, և միայն Գէորգ Դ. կաթողիկոսին վիճակվեց հիմնադիր լինել այս բարձրագոյն հոգևոր կրթական հաստատության։

Գէորգ կաթողիկոսը, ինչպէս գրում է 1874 թուին կոնդակում [1]), նկատելով որ «մեր եկեղեցականները յետ են մնացել և ընդհանրապէս զուրկ են նախկին հոգևորականների հոգևոր և բարոյական կատարելություններից, անծանօթ են կենցաղօգուտ գիտությունների և լեզուների», որ բարեպաշտությունն և աստուածպաշտությունն նուազելը,... եկեղեցիների ու վանքերի անշքանալը, զանազան կրօտաբեր ախտերի և մոլությունների յաճախելը ակնայայտնի ապացոյց են մեր եկեղեցականների և աշխարհականների անփութության և ժանտաւանդ անպարտաճանաչության և խոր տգիտության»՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի գահը բարձրանալու օրից ի վեր հետաքրքրություն է լինում հոգևոր դպրոցներ և թեմական դպրոցներ բանալու, եղածները բարեկարգելու, կանոններ հաստատելու։ Նկատել է նաև մի բարձրագոյն դպրոցի անհրաժեշտությունը, որի կարևորությունը ճանաչված են եղել և նրա նախորդները, բայց յայտնի չէ թէ ինչու չեն իրագործել։ Ինքը, Աստծու վրա յոյս դնելով՝ յաջողում է աւարտել այդ հոյակապ շինությունը և պատրաստում է «ճեմարան Թաւանդաւորաց Սրբոյ Էջմիածնի»։ Այս նորակառույց ճեմարանը, հիմնադիր Հայրապետի խօսքով, «իբրև ազգային ընդհանուր սեփականություն և աղբիւր դաստիարակության ընդհանուր եկեղեցականության ազգիս» գլխաւոր նպատակ պէտք է ունենար—ընծայել ազգին կուսակրօն եկեղեցականներ, զարգացած կրօնական բարձրագոյն ուսումով և կարևոր լեզուներով ու աշխարհական գիտություններով... որոնք ուսումն աւարտելով՝ հետզհետէ բանան ազգային դպրոցներ և լինեն հոգևոր դաստիարակներ, բանիբուն քարոզիչներ»։ Այս ճեմարանի համար աշակերտ պէտք է ընտրվէին, ինչպէս երևում է հիմնական ծրագրից և հրահանգից [1]), որքերը և աղքատ ծնողների որդիք, և բոլորը պէտք է պահվէին և սովորէին ձրի, էջմիածնի հաշուով։ Ճեմարանը պէտք է ունենար 6 դպրանոցական դասարան, և 3 ճեմարանական լսարան։ Աւանդվելիք առարկաների մէջ, բացի հոգևոր դպրոցներում աւանդվածներից, մտնում էին նաև կրթություն եկեղեցական բեմբասացության, եկեղեցական իրաւաբանություն, լատիներէն, յունարէն և եբրայերէն։

Առաջին տարին պէտք է ընդունվէին 75 աշակերտ, որոնցից 49 հոգի Ռուսաստանի զանազան թեմերից, 21՝ Թիւրքիայից և 5 Պարսկաստանից։

Այս աշակերտներին ընտրելու համար՝ 1874 թուի յունիս ամսին Ռուսաստանի վիճակներն ուղարկեցին Արիստակէս Սեղբակեան, Գէորգ Սուքէնեան (այժմ արքեպիսկոպոսներ) և Վահան Բաստամեան (այժմ հանգուցեալ) վարդապետները, իսկ Թիւրքիա և Պարսկաստան կոնդակներ գրվեցին աշակերտներ ուղարկելու համար։

Սեպտեմբերի 28-ին Գէորգ կաթողիկոսի անուանակոչության տարեդարձն էր. այս օրն էր նշանակված և ճեմարանի բացումը։ Հանդիսաւոր պատարագից յետոյ ամբողջ միաբանությունը

---

[1]) Ա. Երէցեան, Պատմ. Ներս. դպր. Ա. եր. 25։

[1]) Ան. եր. 26.
[2]) Ա. Երէցեան, Ա.մ. Հայոց Կաթողիկոսությունը, Ա., եր. 478։

[1]) «Արարատ» 1894, եր. 259—262։ Այստեղ և շարունակությունն մէջ, դիւրության համար՝ կոնդակից քաղուածքները բերում ենք աշխարհաբար թարգմանությամբ։

[1]) „Արարատ“ անդ., եր. 263—265։

Երկրագործության մինիստրի համար, որի վրա ընկած է պետության երկրագործական արդիւնաբերությունը զարգացնելու բարձր խնամքը, ի հարկէ, ցաւալի է, որ այն երկիրը, որ կարող է իր կուլտուրայի բերքերը ուղարկել ոչ միայն Ռուսաստան, այլ և օտար երկիրներ, չը նայած իր աղգաբնակության աշխատասիրության, չը նայած որ սովոր է այգեգործության և գինեգործության, հազիւ հազ է կարողանում ծայրը ծայրին հասցնել, իսկ երբեմն կարօտում է նաև կողմնակի օգնության, ինչպէս այդ տեղի ունեցաւ անբերրիության տարիներում և սպասվում է առաջիկայ ձմեռվայ ընթացքում։ Ժողովրդական մասսաները խրված են տգիտության մէջ, զրկված են տեխնիկական գիտելիքներից, որպէս զի նպատակայարմար կերպով կարելի լինէր օգտվել բնության պարգևներից, ստրկացած են վաշխառուների ձեռքում, որոնք արմատից քայքայում են ժողովրդական բարօրությունը։ Լայնարձակ արգաւանդ դաշտեր, ինչպէս են Մուղանի, Միլի և այլ դաշտերը, մնում են անմշակ. ծաղկած տեղերը դառնում են վայրենի անապատներ՝ ոռոգման միջոցների բացակայության կամ նուազության պատճառով. իսկ ոռոգվող տարածությունները, ինչպէս, օրինակ, Ղարայեազի դաշտը, բաւականաչափ բնակչություն չունեն և գլխաւորապէս թափառականներին են պատկանում։ Երկրի ամենակարևոր արդիւնաբերությունը—այգեգործությունը և գինեգործությունը—ոչնչանում է կենդանական և բուսական թագաւորությունների զանազան պարազիտներից. չերամապահությունը ընկած է, որովհետև չը կան սերմ պատրաստող գործարաններ և երկրում տարածվում են, հսկողություն չը լինելու պատճառով, արտասահմանի այնպիսի սերմեր, որոնք յաճախ վարակված են լինում հիւանդություններով. ծխախոտագործությունը վնասներ է բերում, որովհետև վաճառականության պայմանները անբարեյաջող են և ծխախոտ մշակողները գործարանատէրերից և պահեստատէրերից են կախված. բամբակագործությունը թոյլ կերպով է զարգանում. տաւարապահությունը և ոչխարապահությունը վնասներ են կրում՝ ապուրի պակասությունից և բերքերը վաճառահանելու դժուարություններից։ Եւ այլն, և այլն։

Գատկերը, ինչպէս տեսնում էք, բաւական տխուր է. Կովկասը, այն երկիրը, որ շլացնում է օտարականին իր սքանչելի բնությամբ, այսօր չունի մի գործ, որով կարողանայ ոչ միայն պարծենալ, այլ նոյն իսկ բաւական մնալ։ Ի՞նչ պէտք է անել այս տխուր իրականության դէմ։— Առաջին խօսքը, որ դուրս է թռչում ամեն մի մարդու բերանից, այն է, որ հարկաւոր է գիտություն և գիտություն։ Շաբաթաթերթն էլ, բնականաբար, ուրիշ մի հրաշք չէ կարող ցոյց տալ մեր ցաւերը բժշկելու համար. նա էլ ամենից առաջ գիտություն է ուզում։ Գիւղատնտեսական կրթություն տարածելու պահանջի հետ մեր ընթերցողները ծանօթ են շաբաթաթերթից առաջ բերած քաղուածքներից։ Այս անգամ կարձանագրենք այն, որ մասնագիտական օրգանը, գիւղատնտեսական կրթություն պահանջելով, նկատի ունի այնպիսի մի կրթություն, որը կարելի է ստանալ մեր երկրում, այն կրթությունը, որ հիմնված է մեր տեղական պայմանների, մեր կլիմայի, հողի, ջրի առաջացրած պահանջների վրա։

Ինչպէս երկրագործական Ռուսաստանի համար անպէտք հանդիսացաւ գերմանական սիստէմով մտնեստությունը վարելը, այնպէս էլ Ռուսաստանում գոյություն ունեցող բարձր գիւղատնտեսական ինստիտուտները չեն կարող գիտուն գիւղատնտեսներ տալ Կովկասին, ուր հողը, կլիման և մտնեսական պայմանները խիստ տարբերվում են ոչ միայն ներքին նահանգներից, այլ և հարաւ-արևմտեան ծայրերից, և պահանջում են յատուկ ուսումնասիրություն։

Այս տեսակէտից, ի հարկէ, ահագին կարեւորություն է ներկայացնում Կովկասում մի բարձր գիւղատնտեսական դպրոց բաց անելը։ Երկար կանգ առնելով այդ հարցի վրա, շաբաթաթերթը մի առ մի ցոյց է տալիս, թէ ինչեր կարող էին անել մեր երկրի համար այդ դպրոցի դասատուները, ուսանողները։ Ի վերջոյ գալիս է ներկայ անբերրի տարվայ հարցը։ Ազգաբնակության պէտք է օգնել, առանց օգնության նա չէ կարող անցկացնել առաջիկայ ձմեռը։ Երկրագործության մինիստրությունը օգնել կարող էր վնասված գիւղերին, ստեղծելով նրանց համար հասարակական աշխատանքներ. ճանապարհներ ուղղել, արքունական անտառներում բան անել, ջրանցքներ չինել և այլն։ Այդպիսով գիւղացին իր աշխատանքով փող վաստակելու կարողությունը կը ստանար և կը հասնէր եկող հունձին։ Մենք էլ շաբաթաթերթի հետ յոյս ենք տածում, որ երկրագործության պ. մինիստրը, անձամբ տեղեկանալով մեր կարիքներին, կը ձեռնարկէ այն միջոցներին, որոնք վաղուց թէ նրա կողմից և թէ բոլոր հասկացող մարդկանց կողմից վերին աստիճանի անհրաժեշտ են համարված Կովկասն իր ընկած դրությունից բարձրացնելու համար։

ՆԱՄԱԿ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

—

Սեպտեմբերի 16-ին

Հասարակության ինտելիգենտ շրջաններում այստեղ շատ են խօսում պրոֆեսորական հարցի մասին։ Մամուլի մէջ արդէն երևացին մի քանի յօդուածներ, որոնք պարունակում են իրանց մէջ մի կողմից խիստ յարձակումներ պրոֆեսորների գործունէության վրա, իսկ միւս կողմից ջերմ պաշտպանություն։ Հարցը ծագել է ոչ իբրև մի անմեղ վիճաբանական կամ ակադեմիական հարց, այլ նա կապված է գործնական հետևանքների հետ։ Մի քանի պրոֆեսորներ արդէն հրաժարականի խնդիրք են տուել։ Այդպիսի հանդամանքներում մամուլի մէջ ծագած հարցը չէ կրում սովորական, խաղաղ քննության բնաւորություն։ Անկասկած, պրոֆեսորների գործունէության մէջ կը գտնվեն պակասություններ և հասարակական գիտակցությունը չէր փակի իր աչքը այդ պակասությունների առաջ, բայց ներկայ դէպքում վիճողների տեսակէտները և նրանց հակառակության շարժառիթները թագնված են բոլորովին ուրիշ մտածմունքների և առարկությունների մէջ, որոնք և ազդում են այն դատողությունների վրա, որ դուք կը կարդաք լրագրական էջերում։

Պետերբուրգում, իբրև մտաւոր խոշոր կենտրոնում, անշուշտ, անսպառ է հասարակական մտածողության աղբիւրը. սակայն մայրաքաղաքի ընդհանուր պատկերը առաջվանը չէ։ Կան և գոյություն ունեն խմբեր, որոնք հաւատում են անձնուէր և իդէական գործունէությանը ժողովրդի բարօրության համար. բայց մայրաքաղաքի մթնոլորտը չէ հագեցված այդպիսի տրամադրությամբ։ Պետերբուրգը ունեցել է ոգևորիչ շրջաններ և յիշելի օրեր։ Իսկ իր ներկայ անգաղափարական կեանքով նա յիշեցնում է մի կողմից առևտրական մի խոշոր կենտրոն, որտեղ դեռ է կատարում փողը և շքեղության փայլը, իսկ միւս կողմից պաշտօնական բազմաթիւ հիմնարկությունների մի ժողովատեղի, ուր դեռ են կատարում ձևը և վարչական փայլը։

Իբրև քաղաք Պետերբուրգը անդադար առաջադիմում է։ Սնեքտրական լուսաւորությունը, որ մուք է դրել մեծ փողոցներում, խոշոր խանութներում և զանազան հիմնարկությունների մէջ, շուտով կը պատի ամբողջ քաղաքը։ Շատ տեղերում լուսաւորության շնորհիւ գիշերը աւելի գրաւիչ և գեղեցիկ է դարձել. քան ցերեկը։ Պետերբուրգը շուտով կունենայ երկաթուղային օղակ, որ կը կապի բոլոր երկաթուղային կայարանները միմեանց հետ և կարողություն կը տայ մայրաքաղաքի շրջակայքում եղած զանազան աւանները, ամարանոցները և քաղաքները մտցնել հաղորդակցության մի մեծ ցանցի մէջ։ Նոյն իսկ այժմ շատ անձեր, որոնք պաշտօն ունեն Պետերբուրգում, ապրում են նրա շրջակայքում և երկաթուղիների միջոցով երթևեկում են կանոնաւոր կերպով։ Երկաթուղային օղակը կընդարձակի այն շրջանը, որ կապված է մայրաքաղաքի հետ։

Ռուսաստանի երկրագործական արդիւնաբերությունը այս տարի աւելի մխիթարական է, քան նախորդ տարիները։ Անբերրիությունը զգալի կերպով մնասել է հարաւային Ռուսաստանի մի քանի նահանգներին միայն։ Այդ տեղերի համար հարկաւոր է նպաստ, որի քանակությունը այժմ որոշվելու վրա է։ Ներքին գործերի մինիստրության մէջ մշակվում է մի հին խնդիր, որ շատ անգամ քննության նիւթ է եղել և մինչև այժմ չէ ստացել որոշ ձևակերպություն։ Այդ խնդիրն է ժողովրդին հաց մատակարարելու, շտեմարաններ հիմնելու և ուրիշ ձևերով ժողովրդին հացով ապահովելու խնդիրը։ Ցանկալի է, որ այս անգամ գոնէ քննությունը և մշակությունը աջող վախճան ունենային և մտցնվէր մի նպատակայարմար սիստեմ ապահովելու ժողովրդին այնպիսի պատահարների ժամանակ, երբ նա կորցնում է իր դաշտերի բերքը և մնում է առանց սերմացուի և առանց հացի։

Ա. Քալանթար

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻ ԳԱՒԱՌԻՑ

—

Ուսկանապատ գիւղ, սեպտեմբերի 9-ին

Անցեալ օգոստոսի 25-ին, երեկոյեան, մոտ ժամի 9-ին, Գանձակ գաւառի Մուրուտ գիւղից մի վերստի վրա՝ գնդակահար եղան երկու հարազատ եղբայրներ՝ Սողոմոն և Գրիգոր Աղաջանեանները, որոնցից առաջինը ամուսնացած է և ունի երեք զաւակ, երկրորդը դեռ միայն նշանված էր։ Դիակները միւս առաւօտը բերվեցին գիւղը և Սողոմոնի 7 տարեկան աղջիկը՝ այդ անակնկալ դէպքից վախեցած՝ նոյն օրը մեռաւ։

Եղեռնագործները, որոնք եղել են մի քանի մարդիկ, երկու գնդակ էին խփել մեծին, որը և ճանապարհի վրա հոգին փչել էր, բայց փոքրը, Գրիգորը՝ չնորհիւ իր դիմացկանության ուժին՝ ստացել է և երրորդ գնդակը, ապա երկար տանջվել էր։ Թէև այնքան մոտիկ է աղէտի տեղը գիւղից և հրացանի ձայները միմեանց ետևից պարզ լսվել են գիւղում, սակայն վատաղարդ և իրար օգնելու գաղափարից զուրկ գիւղացիները ուշ չեն դարձել։ Հետևեալ օրն է միայն պարզվում տխուր եղելությունը. տեսնում են փայտով բեռնած սայլը ճանապարհին կանգնած, լցած գոմէշները նստած, մի քանի քայլի վրա աջ ու ձախ դիակները փռված... Աւելորդ եմ համարում նկարագրելու թշուառ մոր դրությունը. նա՝ տեսնելով տարաբախտ զաւակների դիակները՝ մերթ ուշաթափվում էր և, մերթ ուշքի գալով՝ մրմնջում. «Ա՜խ Աստուած, որ թուրքին ստեղծելու էիր, էլ ուր էիր մեզ ստեղծում...»

Սպանությունը կատարված է վրէժից դրդված։ Սպանվածներից ոչինչ չէ տարված, նոյն իսկ գրպանների փողերը և հագուստները իրանց տեղն էին։ Կասկածը ընկնում է յայտնի աւազակաբարոյ թուրքալեհասանլուեցիների վրա, որոնց աւազակային ձեռքով թափվել է, թափվում է և դեռ պիտի թափվի շատ և շատ անմեղ արիւն։ Մուրուտ գիւղը արօտատեղ չունի, ուստի արքունական կալուածքների կառավարությունը թուրքալեհասանլուեցիներին տրվելիք արօտատեղերի մի մասը յատկացրեց մուրուտցիներին, որոնք այս տարի օգտվեցին վրէժառու հարևանների անվերջ սպառնալիքների տակ, որի հետևանքը եղաւ այս եղեռնագործությունը։ Կասկածելի անձնաւորությունները բանտարկվեցին և վերջին արձակվեցին։

Աւելորդ է կրկնել, որ գառը գայլի հետ չէ կարող ապրել, նոյնպէս էլ խաղաղ և աշխատասէր գիւղացին արիւնարբու և գազանաբարոյ հարևանի հետ, որը՝ եթէ սոված մեռնելիս էլ լինի, հոգ չէ, միայն թէ փափուշների շարքերը զարդարեն նրա կուրծքը և թիկունքը, իսկ հրացանը՝ այն էլ արագաձիգ հրացանը՝ միշտ ձեռքին լինի։ Ի՞նչ կարող է անել գոմէշ քչելու «չօլտին» կարկտի պէս տեղացող գնդակների դէմ։ Անցեալ գարնանը շրջակայ գիւղերը պատրաստվում էին տօնելու թուրքալեհասանլուեցիների այստեղից բոլորովին արտաքսելու գործը, տեսան 5-ին վեր կենային, իսկ տօն օրերը, երբ եկեղեցի պէտք է գնային՝ դեռ աւելի վաղ։—(Ղազարապատում այդ կախված էր մեղանից. եղել են դէպքեր, երբ 12—1—2 ժամին ենք պառկել այնտեղ)։ Միմեանց պէտք է «եղբայր» ասէինք. անպայման պէտք է ենթարկվէինք բոլոր կարգերին. հաստատվեց ճեմարանում ամենախիստ կարգապահություն, աշխարհ հսկողություն։ Սրբազանը ամեն կիրակի օր, պատարագից առաջ, դահլիճում, բոլոր աշակերտների ներկայությամբ, քննում էր մեր շաբաթական վարքը և թուանշան դնում։ Ինքը կատարում էր մեղադրողի և դատաւորի դեր, թոյլ տալով սակայն, որ աշակերտն իրան արդարացնէ։ Թէ որչափ խիստ էր կարգապահությունը այս ժամանակ՝ կը հասկացվի հետևեալից։ Առաջին շաբաթներից մէկում ես վերակացուից սերտարանում թոյլտուություն խնդրեցի՝ գնալ ընկերոջս, Գալուստ Տէր-Մկրտչեանի հետ դաս պատրաստելու. վերակացուն թոյլ չը տուեց։ Քիչ յետոյ, երբ անցնում էր աւագ վերակացուն՝ նոյնը խնդրեցի նրանից (չը յայտնելով որ վերակացուն մերժել էր խնդիրս) և թոյլտուություն ստացայ։ Վերակացուն ինձ տեսնելով ընկերոջս մոտ նստած՝ նկատողություն արաւ, բայց ես արդարացրի ինձ՝ թէ աւագ վերակացուն թոյլ տուեց։ Այս յանցանքս կիրակի օրը քննվեց, և սրբազանը ինձ վարքից 3 նշանակեց, առաջին 3-ը, որ նշանակված է վարքից ճեմարանում։ Նոյն օրը ես ներողություն խնդրեցի և սրբազանը ամենայն սիրով ներեց և վատ թուանշանս ջնջեց։

(Կը շարունակվի)

որի մասին արդէն լուրեր էին պատում. բայց բանից դուրս եկաւ, որ այդ անհանգիստ գիւղացիները՝ իրանց յանցանքը գցելով իրանց մօտ պատսպարվող նորեկ աւազակների վրա՝ ազատվեցին աքսորանքից. պատժվեցին միայն նրանց հրաւէրով Թոփալ-Հասանլու գիւղում ժամանակաւոր, առանց կառավարութեան գիտութեան՝ ապրող 63 ծուխ, որոնց գլխաւոր արհեստը գողութիւն էր և սպանութիւն: Գերմանական Ելենդորֆ գաղութի խաղաղ ազգաբնակութիւնը սարսափելի վնասներ է կրում անհանգիստ հարևանից: Տեղիս խաղաղ ազգաբնակութիւնը անչափ ուրախ էր տարածված լուրերի պատճառով, թէ Թոփալ-Հասանլուեցիներին արտաքսում են և նրանց տեղը բնակեցնում ռուս գաղթականներին:

Դեռ այս տխուր դէպքը դադարել չէր մտքեր և սրտեր յուզելուց՝ երևան է գալիս մի ուրիշը: Քանի օր սրանից առաջ, գիշերը, երկու թուրք գողեր յարձակվում են հարևան Միրզիկ գիւղի մի եղնաբածի վրա, որը գիշերը արածացնելիս է լինում գութանի եղները: Նրանցից մէկը դաշոյնով կտրում է քնից նոր արթնացած և չշկլված հողագործին, իսկ միւսը քշում է և հեռացնում եղները: Կարծելով թէ էլ իր զոհը չէ կարող շարժվել տեղից, աւազակը փախչում է և հասնում ընկերին. սակայն արիւնաշաղախ գիւղացին հետևում է նրանց և երբ տեսնում են նրան, նրանցից մէկը յետ է դառնում՝ վերջացնելու գիւղացու հետ իր հաշիւը. մերկացրած դաշոյնով և սպառնալիքներով գալիս է, բայց դեռ չը մօտեցած՝ իր արժանի վարձատրութիւնը ստանում է: Ինքնամոռացութեան մէջ ընկած գիւղացին նոր է յիշում, որ մօտը հրացան ունի, արձակում է մի գնդակ և ցրիտալիս ընչաքաղց գողի աչքը և ջարդում ծոծրակի ոսկորները: Գողը տեղն ու տեղն է մընում, նրա ընկերը եղները թողնում է, կորչում: Երեք օր է, սպանվածին տէր դուրս եկող չը կայ: Պրիստաւի հրամանով թաղեցին դիակը Թոփալ-Հասանլու գիւղում: Ոչ ոք չէր ուզում տէր դուրս գալ այդ «աննամուս» թուրքին, որը սպանվել է մի անչնորք հայի ձեռքով: Զանցած հինգ օր, Միրզիկ գիւղի դարմանոցները և խոտի դէզերը հրդեհվեցին: Ի՞նչ անէ գիւղացին. սպանում է վայ է, սպանվում է վայ է...

Նիկ. Գրիգորեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Գօրի, սեպտեմբերի 21-ին

Այս բոպէին կարդացի «Մշակի» 174 համարում Ժընէվից, սեպտեմբերի 7-ից գրած նամակը, որը, ի միջի այլոց, հաղորդում էր երիտասարդ Նիկ. Աւշարեանցի ինքնասպանութիւնը: Ինձ համար սարսափելի էր այդ լուրը և ես շտապում եմ յայտնել հասարակութեան, թէ ինչ հանգամանքների զոհ էր այդ երիտասարդ ոյժը:

Նիկոլայ Աւշարեանց եկաւ ժամկանացուների աշխարհից կեանքի դարունը չը բոլորած, ծաղիկները չը բացված և բազմաթիւ բարեկամներիս իր վրա դրած գեղեցիկ յոյսերը չարդարացրած: Դեռ երկու տարի սրանից առաջ, խրախուսված կրեսոսի փառքով շլացած մի քանի մարդկանց խոստումներից՝ անցաւ Պարիզ իր զարմանալի նկարչական ընդունակութիւնները զարգացնելու համար և աջողեցրեց մտնել Պարիզի գեղարուեստական ճեմարանը, ուր օրինակելի առաջադիմութիւն ցոյց տուեց: Սակայն փառամոլ բարերարները կարճ ժամանակում դրժեցին իրանց խոստմանը, շատ քիչ բացառութեամբ՝ կանոնաւոր չէին ուղարկում խոստացած նպաստադրամը, ստեղծելով թշուառ երիտասարդի համար օտար աստղերի տակ մի յուսահատ վիճակ, որին այսօր զոհ գնաց մի հայ մարդ, որից իրաւամբ ապագայ էինք սպասում:

Անցեալ յուլիսի վերջերին սարսափելի յուսահատութեամբ գրում էր ինձ. «Հայր սուրբ, կորչում եմ—փրկեցէք. բարերարներս չեն օգնում, երկար քաղցած եմ մնում և ապրելն անհնարին է դառնում»: Անմիջապէս վաթսուն ռուբլի ուղարկեցի, խնդրելով վերադառնալ հայրենիք, մինչև կանոնաւոր միջոց որոնենք նորից ուղարկելու իր սիրած և փայփած գործը շարունակելու, սակայն այլ ևս պատասխան չառայ և պատասխանը եղաւ նրա մահվան տխուր և սարսափելի բօթը, որ անչափ ցաւեցնում է ինձ. բայց ինչ կասէ այդ մահը ոսկի հորթին երկրպագու անգութ բարերարներին... Հանգիստ վաղամեռ երիտասարդին, դժբաղդ բարեկամիս ողորմելի աճիւնին:

Ի սիրտ և ի հոգի դառած նրա հարազատների հետ՝ բաժանում եմ այդ անտանելի կորստի պատճառած վիշտը:

Իսահակ վարդապետ Տէր-Միքայէլեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ինչպէս սպասվում էր, չորեքշաբթի օր, Արքունական թատրոնում ներկայացրվում Վերդիի «Տրավիատա» օպերային մեծ բազմութիւն էր եկել օր. Պապայեանին լսելու «Տրավիատա»-ին օպերա է և ներկայացված է շատ շատ անգամ Թիֆլիսի բեմի վրա, բայց և այնպէս հասարակութիւնը լսում էր մեծ հետաքրքրութեամբ: Տպաւորութիւնը վերին աստիճանի լաւ էր, մանաւանդ վերջին գործողութեան մէջ: Այսօր խաղում են «Ռիգոլետտո», հեղ. Վերդիի, մասնակցութեամբ օր. Պապայեանի:

—

«Тифл. Листокъ»» լրագրին հաղորդում են, որ շտաբս-կապիտանի այրի Մ. Ֆ. Շէլիգովա 1000 ր. նուիրեց Կարսի երկաթուղու գծի վրա այս օրերս տեղի ունեցած խորտակումից վնասվածների օգտին այն պայմանով, որ այդ փողը բաժանվի բոլոր վնասվածներին, առանց խորութեան կրօնի և ազգութեան:

—

Մայրաքաղաքի լրագիրների ասելով, ներկայումս երկրագործութեան մինիստրութիւնը աւարտում է նախկին Կարսի և Բաթումի շրջանների հողային դրութիւնը կարգադրելու հարցը:

—

Ղազախի գաւառի ԲԱՐԱՆԱ գիւղից մեզ գրում են. «Այս կողմերում տարածված է կապոյտ հազ (КОКЛЮШЪ) կոչված մանկական հիւանդութիւնը, որից ազատ չեն մնում և հասակաւորները: Հիւանդութիւնը զոհեր էլ է տանում: Լաւ կը լինէր եթէ գաւառական բժիշկը այցելէր գիւղերը:»

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են. «Այս տարի Պետերբուրգի տեխնոլոգիական ինստիտուտում քննութեան ենթարկվեցին մօտ 1100 հոգի. այդ թիւից ընդունվել են 323 ուսանող, որոնցից 13 հայ: Հայերից ընդունվել են. Պօղոսեան Յովհաննէս, Տէր-Միքայէլեանց Աղէքսանդր, Սարմազքեշեանց Վարդան, Թիւսիկեանց Ռուբէն, Աղամեանց Կոնստանտին, Քօչայեանց Մկրտիչ, Մէլիք-Յովսէփեանց Յովսէփ, Սարուքանեանց Բագրատ, Աղասարեանց Գրիգոր, Յարութիւնեանց Մովսէս, Մատուրեանց Նիկողայոս, Զիլինգարեանց Գէորգ, Ասլանեանց Կոնստանտին: Ի դէպ. «Մշակի» № 163-ի այն լուրը, իբր թէ այս տարի տեխնոլոգիական ինստիտուտում «ամբողջ Անդրկովկասից կարողացել է մտնել միայն մի ուսանող—Ռ. Թիւսիկեանց»—բոլորովին սխալ է: Մենք կարող ենք յիշել Անդրկովկասում աւարտածներից 5 հոգի, որոնք կօնկուրսով պահանջված թանաչան են ստացել, իսկ մնացածները ընդունվել են լուսաւորութեան մինիստրի առանձին կարգադրութեամբ»:

—

Ղազախ գաւառի ԲԱՐԱՆԱ գիւղից մեզ գրում են. «Մեզանում վերջացան կալերը, վերջացաւ և այգեքաղը: Այս տարվայ բերքը իր յատկութեամբ ընտիրը կարելի է համարել. պտուղների առատութիւն է, բայց ամեն բանի թանգութիւն»:

—

ՂԶԼԱՐԻՑ մեզ գրում են. «Խաղողի բերքը անցեալ տարվանից պակաս է. դեսեատինից ստացվում է 200—500 վեդրո, այն ինչ անցեալ տարի ստացվեց 300—800 վեդրո: Շիրին (քաղցուն) ծախվում է 50—60 կոպէկով, գինին դեռ գին չունի: Միլդիու կոչված հիւանդութիւնը այս տարի շատ թոյլ կերպով ներգործեց և չը վնասեց»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, սեպտեմբերի 10-ին

Հայի յատկութիւնն է միշտ անձնական հաշիւը, նախանձոտ «եսը» նախադասել հասարակականից. ոչ մի հայ հաստատութիւն, ընկերութիւն կամ մի ազգօգուտ ձեռնարկութիւն է եղել մինչև այժմ, ուր «եսը» չէ մտել խառնելու գործերը, լուծելու ընկերութիւնը, անօգուտ անելու ձեռնարկութիւնը կամ փչացնելու հաստատութեան նպատակը: Հազարաւոր փաստեր կան, որոնք բնորոշում են հայի այդ վատ կողմը. մենք ևս վշտացած արձանագրում ենք մի փաստ, աւելացնելով այդ տխուր իրողութեան վրա նաև մէկը:

Տեղիս Թաւրիզի Հայուհեաց Բարեգործական ընկերութիւնը շատ լաւ գործունէութիւն ցոյց տուեց, խնամելով թիւրքահայ գաղթականներին. շատ չուտով կարողացաւ անուն հանել և զանազան կողմերից նուէրներ սկսեցին տեղալ, որով շատ նախանձելի ամրութեան հասաւ: Բայց «եսը» կարողացաւ իր խառնակիչ գլուխը ներս կոխել նաև այդ ընկերութեան մէջ: «Ես»-ը գրգռեց ընկերութեան անդամներից մի քանիսների անձնասիրութիւնը—ինչու՞ այս ինչը նախագահ լինի, այս ինչը գործադիր անդամ, իսկ ինքը՝ ոչ:

Երկպառակութիւն ընկաւ ընկերութեան անդամների մէջ. լուր տարածվեց, թէ զեղծումներ են կատարվել հաշիւների մէջ և այլն: Այդ լուրերի առաջն առնելու համար ընկերութիւնն առաջարկեց քննել ճիշդ և մանրամասն հաշիւները, ուր և ոչ մի զեղծում չը կար: Այժմ նախկին դրութեամբ, նոյն եռանդով մնում է նոյն ընկերութիւնը, թէև ասէ-կոսէները դեռ շարունակվում են:

Շատ են խօսել, գրել, որ Թաւրիզի կանանց երկու ընկերութիւնները միանան և ձեռք ձեռքի տուած գործեն. վերջին ժամանակներումս բանակցում էին միացման համար, բայց «եսս»-ը չը թողեց իրագործել այդ միտքը, և այժմ էլի երկուսն առանձին-առանձին կամենում են նեսամացնել միմեանց:

Ֆարրօ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Kölnische Zeitung» լրագրին հեռագրում են Բելգրադից, որ ամբողջ մի շաբաթ բանակցութիւններ էին կատարվում Պաշիչի հետ՝ ներքին գործերի մինիստր Գենչիչի միջնորդութեամբ: Այդ բանակցութիւնները շարունակվում են նաև Նիշում: Պաշիչ աշխատում է իր ընկերների ազատութեան համար էլ: Նիշում հաւատացած են, որ Պաշիչի միջնորդութեամբ կարելի կը լինի հանգստացնել երկիրը:

—«Daily News» լրագիրը հաղորդում է, որ իրերի դրութիւնը Սերբիայում սաստիկ կրիտիկական է: Ամբողջ թագաւորութեան մէջ հրատարակվող լրագիրներից ոչ մէկը չը յանդգնեց գրել Կնեժեվիչի մահից առաջ ասած խօսքերը: Լուրեր են պատում, թէ Զուրիչ աւագ քահանան խելագարվել է: Պատրաստվում է մի աղերսագիր թագաւորի անունով՝ Տաուշանովիչին ազատելու համար:

—«Siécle» լրագրի խմբագրութիւնը ստորագրութիւն է բացել Շերէր-Կեստների համար արձան կանգնեցնելու: Ստորագրվողներից առաջինն էր Աղոլֆ Կարնօ, հանգուցեալ նախագահի եղբայրը, պրոֆէսսոր Միշել Բրէալ, պրոֆէսսոր Լուի Գոյէ, սենատի նախագահի որդի՝ Էմիլ Դեշանէլ, Պարիզի քաղաքային խորհրդի նախագահ Բրէլէ և ուրիշներ: Բրէլէ իր ստորագրութեանը աւելացրել է «քաղաքային խորհրդի նախագահ և կարծեցեալ դաւաճանութեան սինդիկատի անդամ»: Քաղաքային խորհրդին առաջարկութիւն է տրված Պարիզի փողոցներից մէկին տալ Շերէր-Կեստների անունը:

—Հարաւ-ափրիկական գործերին քաջ տեղեակ անձնաւորութիւն,—«Русск. Вѣд.» լրագրի թղթակցի խօսքով, համարվում է գրող կին Օլիվ Շրապլէր, որը երկար ապրել է Կապ կոլոնիայում և Տրանսվաալում: Ահա նա, ի միջի այլոց, ինչ է գրում. «Անգլիան պէտք է կատարելապէս պարզէ իր հաւատ, թէ ինչ է նշանակում պատերազմ Հարաւային Աֆրիկայի հետ: Աշխարհիս ամենամեծ կայսրութիւնը իր ամբողջ ծանրութեամբ պէտք է ընկնի մի փոքրիկ պետութեան վրա, երեսուն հազար մարդկանց վրա, հաշուելով դրանց մէջ տասն և վեց տարեկան տղաներին և 60-ամեայ ծերերին, մի փոքրիկ ժողովրդի վրա, որը չունի մշտական զօրք, ոչ էլ կազմակերպված կօմիսարիատ: Բօէրների կանայքը և աղջիկները բոլորն էլ կազմում են մի զօրք, որը պատրաստում է այն պաշարները, որ պէտք է նրանց ամուսինները, հայրերը և զաւակները իրանց հետ կուի դաշտը տանեն: Այժմ Տրանսվաալում զինաւորվում են մինչև անգամ կանայք, որպէս զի մասնակցեն իրանց հայրենիքի վիճակը որոշող կռուին: Մենք կարող ենք ոչնչացնել այդ փոքրիկ ժողովուրդը աւտրալիական և կանադեան գնդերի օգնութեամբ: Միմիայն Անգլիայի ոյժերը անբաւարար են հաւաքվում այդ նպատակի համար: Մեր կարգադրութեան տակ բացառական միջոցներ են գտնվում. բօէրները հաւաքված են, որ արդարութիւնը նրանց կողմն է: Մեր պատերազմը քաղաքագէտների պատերազմն է: Բօէրները սկսում են ժողովրդական պատերազմ: Ունենալով զօրք և դրամ,—մենք կարող ենք կատարելապէս ջարդել հանրապետութիւնը. բայց բօէրները թանգ կը ծախեն իրանց ազատութիւնը և կեանքը: Քսան կամ երեսուն միլիոն ստերլինգի և բազմաթիւ կեանքերի գնով մենք կարող ենք նուաճել Տրանսվաալը և անկախութեան դրօշակը պոկել, որը այնպէս թանգագին է բօէրների համար. բայց մեզ վրա կընկնի մի ամօթալի բիծ, որը չեն կարող սրբել մինչև անգամ դարերը: Միատեսակ կորուստ կունենան թէ Անգլիան և թէ Հարաւային Աֆրիկան. Անգլիան կը կորցնէ իր պատիւը, կը կորվի հաւակրութեան թելը, որը միմիայն կարողանում է կապել Բրիտանիան իր հեռաւոր կոլոնիաների հետ, Հարաւային Աֆրիկան կը դուրս գայ կուից արիւնաթաթախ, այլանդակված, ատելութեան և վրէժխնդրութեան գաղտնի զգացմունքով:»

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

22 սեպտեմբերի

ՄՈՍԿՎԱ: Մոսկվա-Արխանգելսկ երկաթուղու նախկին դիրեկտոր Արցիբաշեվ, քննիչի մօտ երկար հարց ու փորձի ենթարկվելուց յետոյ, բանտարկվեց:

Մոսկվայի Գիւղատնտեսական ընկերութիւնը եկող տարվայ մարտ ամսին հրաւիրում է զանազան հիմնարկութիւնների ներկայացուցիչներին և գիտնականներին՝ ազգաբնակութեանը տեղական գիւղատնտեսական օգնութիւն հասցնելու համար և տարածելու միջոցներ և գիտութիւններ, որոնք կը նպաստեն գիւղատնտեսութեան:

Մոսկվայում ձերբակալվեց մի հրէայ բժիշկ, որը իր հիւանդներին պատուաստում էր սիֆիլիս, շահագրգիռական նպատակով:

ԼՕՆԴՕՆ: Նիւկեստելից հեռագրում են «Standard» լրագրին, որ բօէրների յարձակողական շարժումը, որը սպառնում էր Նատալին, յանկարծ կանգ առաւ: Բօէրների մեծամասնութիւնը, որը գրաւած ունէր Նիւկեստելի արևմտեան բարձրութիւնները, հեռացաւ նորից դէպի առաջվայ յենակէտը: «Standard» լրագրի թղթակիցը նկատում է, որ ահագին սպառազինված ոյժերը չեն կարող երկար ժամանակ գրաւած պահել այդ երկիրը, պաշարեղէնների պակասութեան պատճառով:

ԲԼԷՄՖՕՆՏԷՆ: Վօգոնսեան լանդրօստը հեռագրում է, որ անգլիական զօրքերը անցել են Օրանժեան հանրապետութեան սահմանը, Կեմբերլէի մօտ:

ՐՕՍՏՕՎ ԴՕՆԻ ՎՐԱ: Սեպտեմբերի 20-ին, գիշերը, այրվեցին տասը մագազին և մրգեղէնների շարքը, որը բաղկացած էր փայտեայ խանութներից: Վնասը ահագին է: Գոյքը մեծ մասամբ ապահովագրված չէր: Հրդեհը շարունակվեց ութ ժամ: Այրվեց մի մրգավաճառ:

ԴՈՒՐԲԱՆ: Հնդկաստանից եկաւ «Secundera» ապրանքատար շոգենաւը թնդանօթներով և սանիտարների մի խմբով: «Lalpoora» շոգենաւով բերված զօրքերը իսկոյն ուղղորդվեցին գէպի դիրքը:

ԿԱՊՇՏԱԴ: Զանազան տեղեկութիւնների վրա հիմնվելով, այժմեանից կարելի է բօէրների պատերազմի ծրագրի մասին հասկացողութիւն կազմել: Նրանց գլխաւոր ոյժերը շրջապատում են Նատալիի նեղ շերտը, որ գտնվում է Տրանսվաալի և Օրանժեան հանրապետութեան մէջ: Տրանսվաալեան զօրաբաժինները սպառնում են Լանդենենին, Զարլին և Դէնդին, այն ինչ Օրանժեան հանրապետութեան զօրքերը և Գարիսմուտեան զօրաբաժինը, յենվելով Զանսէպանեան անցքի վրա, սպառնում են Լէդի-Սմիտին:

ՆԻՒ-ԵՕՐԿ: «World» լրագիրը ուղարկեց Մակկինլէին խնդրագրի ստորագրութիւնների առաջին սերիան, որի մէջ խնդրում են նրան առաջարկել Անգլիային և Տրանսվաալին իր միջնորդութիւնը:

23 սեպտեմբերի

ԼՕՆԴՕՆ: «Times» լրագրում հրատարակված է հեռագիր Պրէտորիից նախագահ Կրիւգէրի ճառով ազգային ժողովի նիստը փակելու ժամանակ: Նախագահն ասեց, որ ամեն բանից երևում է, որ պատերազմ է լինելու, որովհետև ստութեան հոգին պատել է բոլոր ուրիշ երկիրներին: Տրանսվաալի ժողովուրդը կամենում է ինքն իրան կառավարել և եթէ մինչև անգամ հազարաւորներ գան յարձակվելու նրա վրա—վախենալու ոչինչ չունի, որովհետև Աստուած է վերջին դատաւորը: Նա կը վճռէ գործը: Զէմսոնի ներս խուժման ժամանակ նոյնպէս հազարաւոր գնդակներ արձակվեցին, բայց բօէրները անվնաս մնացին, այն ինչ միւս կողմում հարիւրաւոր մարդիկ սպանվեցին: Այդ ապացուցանում է, որ Աստուածն է կառավարում աշխարհը: Ազգային ժողովի նախագահը պատասխանեց, որ աւելի լաւ է չապրել, քան թէ ոչինչ հայրենիք չունենալ և որ այժմ, բացի պատերազմից, այլ ևս ոչինչ հնարաւոր չէ:

Կապշտադից հեռագրում են, որ Նատալիի սահմանի վրա դրութիւնը այնքան լուրջ է երևում, որ իշխանութիւնները անհրաժեշտ համարեցին հարցնել ծովապետին Սիմօնս ծովածոցում, թէ արդեօք ազատ է «Դօրիս» մարդատար նաւը գեներալ Ուայտին և 12 օֆիցէրներին ուղղակի Դուրբան հասցնելու համար:

ՎԱԼԱՆՍ: Լուբէն այցելեց Գրինիօն, որի ներկայացուցիչն էր նա ընդհանուր խորհուրդում: Արտասանած ճառի մէջ նախագահը միաբանութեան և համաձայնութեան էր հրաւիրում, որոնք,—ասում էր նա,—ի չիք կը դարձնեն ժամանակաւոր յուզմունքը երկրի մէջ և կարելի կը լինի եռանդուն կերպով նուիրվել ցուցահանդէսի աջողութեան ապահովութեան գործին: «Այն ամենը, ինչ որ Ֆրանսիան,—աւելացրեց Լուբէ,—մեծ, գեղեցիկ և լաւ բան է կատարում—արտացոլվում է ամբողջ տիեզերքի վրա:»

ԲՐԻՍԷԼ: Հեղինակաւոր աղբիւրից ստացված լուրերի համեմատ, Լէյդս տեղեկութիւն է ստացել, որ Կրիւգէր ուղարկեց Սալիսբուրիին մի ուլտիմատում, որի մէջ պահանջում է հեռացնել անգլիական զօրքերը Տրանսվաալի սահմանից

48 ժամվայ ընթացքում։ Այդ հաղորդութիւնը, սակայն, պաշտօնական չէ։ Ուլտիմատումը, լուրերին նայելով, յանձնվեց երկուշաբթի։ Եթէ նա ուշադրութեան չարժանանայ, Տրանսվաալը հինգշաբթի կը սկսի զինուորական գործողութիւնները։

ՊԱՐԻԶ։ Բէրանժէ խորհրդակցեց ոստիկանական պրէֆէկտի և դատաստանական քննիչների հետ այն դաւադրութեան մասին, որ բացեց Բէլգիոյ Գրէվիլ «Etoile Belge»-ի մէջ։ Կարծում են, որ տեղի կունենան հետաքրքիր խուզարկութիւններ և կալանաւորութիւններ։

ՍԻՄՖԷՐՕՊՕԼ։ Նահանգական դատարանում քննվում էր մի սրտայոյզ գործ։ Մեղադրվողը Գրիգոր անունով թիւրքահպատակ մի հայ է, որը Սիմֆէրօպօլում սպանեց Թիւրքիայից եկած թիւրքահպատակ Հասանին։ Վերջինս թիւրքաց գազանութիւնների ժամանակ Էրզրումի շրջանում սրի էր անցկացրել հայ Գրիգորի ամբողջ ընտանիքը։ Երդուեալները արդարացրին մեղադրեալին։

ՐՕՍՏՕՎ ԴՕՆԻ ՎՐԱ։ Սպասվում է անգլիական էկսպէդիցիայի գալուստը, որը ուղարկված է ծանօթանալու անանապատութեան հետ Ռուսաստանում և փաստեր հաւաքելու ռուսական անասունները Անգլիա տանելու վերաբերմամբ։

ԲԱԳՈՒ։ Բաղուցի վաճառական Բուդաղով 50,000 ր. նուիրեց գժատուն կառուցանելու համար, այն պայմանով, որ գժատունը պահվի քաղաքի հաշվով։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՑԱՑՏՆՈՒՄ Է

—

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼ. Դերասան Ստեփանեան. Խմբագրութիւնը ձեզ թոյլ տուեց պատասխանել այն բոլորի դէմ, ինչ ձեզ էր վերաբերվում. բայց չէ կարող իրաւունք տալ, որ դուք չօշափէք ուրիշ, գործին չը վերաբերվող հանգամանքներ։ Ուստի և բոլորովին անտես ենք առնում ձեր սպառնալիքը։

ԲԱԳՈՒ, Ա. Բ. Զենք տպագրի. յանձնեցէք մէկին, որ ստանայ ձեր ձեռագիրը։

ԹԻՖԼԻՍ. Մ. Մ. Դուք խառնում էք հասարակական իդէալները հասարակական նախապաշարմունքների հետ և այդ պատճառով չէք կարողացել ըմբռնել մեր յօդուածի միտքը։

Ժամանակաւոր խմբագիր՝
ԱՌԱՔԵԼ ԲԱԲԱԽԱՆԵԱՆ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԳԼԻԵՐԷՆ ԼԵԶՈՒ
Մ. ՄՈՒՐՏԱԳ,

հեղինակ «Բ.ՕՐԹՕՄ», «ԿՕՋՕՐ» և ուրիշ շարադրութիւնների. ժառանգին արձակուրդներից յետոյ վերսկսել է իր դասերը թէ իր մօտ և թէ տներում։ Երաչխաւոր է ուղիղ արտասանութեան համար և աւանդում է ռուսաց, ֆրանսիական և գերմանական եղանակներով։ Աշակերտներին և երեխեկներին զիջում։ Կարելի է տեսնել ժամի 10-ից մինչև 4-ը։ Մատաթովկայա փողոց, տուն Մարտիրոսեանի։ 3—5

Կարա-Մուրզան

մնում է Թիֆլիս մշտական, տալիս է մասնաւոր դասեր երաժշտութեան, դաշնամուրի վրա ներդաշնակութեան թէորիայի և այլն։

Разъѣзжая, № 9, д. Попова, уг. Михайловской и Елизаветинской улицъ. 3—5

ԲԺՇԿ. ՎԱՀԱՆ ՍՐԹՐՈՒՆԻ

Վերանորոգել է հիւանդների ընդունելութիւնը բակի, կոկորդի, քթի և ականջի հիւանդութիւնների համար իր նոր բնակարանում, Սօլօլակ, Սերգիեվսկի փող., տ. Ծովիանովի։ 8—10

Հ. Ա. Սեթիք Կոյլաւի
ԳԵՐՄԱՆԵՐԷՆ-ՀԱՅԵՐԷՆ ԱՄԵՆԱՑԱՑՏՆԻ

ԲԱՌԳԻՐՔԸ

1667 էջ, գինը, 10 ռուբլի, ծախվում է 5 ռուբլիով Ա. Խուդավերդեանի մագազինում, Գօլովինսկի պրօսպէկտի վրա։ Օտար քաղաքացիք պէտք է վճարեն 50 կօպ. պօստային ծախս, իսկ վերադիր վճարով պահանջողները պէտք է ուղարկեն 2 ռուբլի։ 1—15

Կիրակի, ամսի 26-ին, առաւօտեան ժամը 12-ին, տեղի կունենայ Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական ընկերութեան

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՇՐՋՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ընտրութիւնները լրացնելու համար. Գանձասարեան, № 25։ 2—3

ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀԻ
Վ. Յ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ

Ելիսավետեան փողոց, տ. № 86. տելիֆոն № 506։ (Հ.) 43—45

ԲԺԻՇԿ Գ. Ս. ԳԵՐՅՖԷԼԴ

Մադերեան փողոց, № 5.

որ մասնագէտ է կաշու, միզասեռական (էլեկտրականութեամբ), վներական և սիֆիլիսի հիւանդութիւնների

ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ

Ընդունում է հիւանդներին ամեն օր
Առաւօտեան 9—12 ժ.
Երեկոյեան 5— 8 ժ.
42—60

Ա. Ց. ԱՍՄԱՆ

„ՆՈՒԱԳՆԵՐ“

Գինն է 10 կօպէկ

Դիմել Թիֆլիս՝ Կենտրոնական գրավաճառանոցին և Թաւրիզ՝ հեղինակին—այսպէս. A. H. Asman. Tauris—Perse. 5—5

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլտուութեամբ։ Մեծ արկղիկը 5 ռուբլի, փոքրը—3 ր. և 1 ր. 50 կ.։

ՆՈՐ ՄԻՋՈՑ

մազերը բուսցնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաև բոլորովին նոր միջոց

ԶՈՒԻ ԿԱԹԸ

երեսին քնքշութիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արևի պատճառած սևութիւնը, մունները, տալիս է կաշուին քնքշութիւն և սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 ռուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական և դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Գուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երևանեան հրապարակ և նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց և Բաղումեան. նաև Միքայելեան կամուրջի վրա, Պապովի և Արիստակովի դեղատներում։ 3—100

„ՎԻԷՆՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ“
ԱՂԷՔ. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆԻ

Գօլովինսկի Պրօսպէկտի վրա, առաջին գիմնազիայի հանդէպ, տուն Քաշուէթի սուրբ Գէորգ եկեղեցու։



Ստացել ենք մեծ քանակութեամբ աշնանային և ձմերային սեզոնի համար՝

Տղամարդկանց եւ Երեխաների պատրաստի հագուստներ։

Ստացված է նոյնպէս ՖՕՐՄԷՆՆԻՑ ԶԳԵՍՏՆԵՐ.—դատաստանական, ուսուցչական և աշակերտական—կլասիկական և Բէալական ուսումնարանների։

Ունենալով մեծ քանակութեամբ մատէրիաներ, ընդունում ենք նաև ամեն տեսակ պատուէրներ։ Գները ՎԵՐԶՆԱԿԱՆ ԵՆ և անհամեմատ էժան։

Վերադիր վճարով պահանջողները, պէտք է ուղարկեն պատուէրի 1/5 մասը։ 1—40

Բացված է գործարանական պահեստ թղթեղէնների

Գ. Ի. ՊԱԼԼԻԶԷՆ ԱԿՑԻՕՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՐԺԵՎՍԿԻ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԿՕՉԷԼԻԵՎՍԿԻ ԱԿՑԻՕՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Պահեստը գտնվում է Թիֆլիսում, Գօլովինսկի պրօսպէկտի և Դէօրգիէվսկայա փողոցի անկիւնում, տուն Քաշվէթի ս. Գէորգ եկեղեցու։ 3—10

Բժշկարար Կէֆիր եւ Կումիս
Օ. ԿՕՐՕՆԱ

Թոյլատրված Թիֆլիսի բժշկական բաժանմունքից և արժանացած երկու մէդալների՝ երկու ցուցահանդէսներում, ընտիր կէֆիր և կումիս պատրաստելու համար։ Կարելի է ստանալ Օ. Կօրօնայի գործարանում, Լօրիս-Մէլիքեան փողոց, տուն Զուբալովի և բաժանմունքում, Միքայէլեան փողոց, օֆիցէրների տնտեսական ընկերութեան խանութին կից։

Ուսուցիչներին, ուսանողներին և տնտեսական քնկ, անդամներին կը լինի զիջում։

Զիջում կունենան և այն չքաւորները, որոնք կը ներկայացնեն բժշկից առանձին դեղատոմս։

Ցանկացողներին՝ կէֆիր ու կումիս կարելի է տուն ուղարկել։ 6—50

ՄԵՔԵՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ
Կ. ԽԱՏԻՍԵԱՆԻ, Հ. ԿԵԱՆՋՈՒՆՑԵԱՆԻ ԵՒ ԸՆԿ.
ԲԱԳՈՒ

ՆՐԱ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ ԲԻԲԻ-ՀԷՅԲԱԹՈՒՄ

Սկսել է իր գործունէութիւնը,

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՊԱՏՈՒԷՐՆԵՐ

ամեն սիստեմի մեքենաների և գործիքների, մասնաւորապէս հորեր փորելու և նաֆթ քաշելու համար՝ շոգէկաթսաների, թորիչների, թուջէ զանազան ձուլուածքների՝ մինչև 1000 պուդ, զանազան պղնձէ ձուլուածքների և այլն և այլն։ Գործարանի պահեստում կարելի է գտնել միշտ Բագուի համար հարկաւոր գործիքներ։

Գործարանի Բիբի-Հէյբաթի բաժանմունքը յանձն է առնում հորեր փորել կապալով Բիբի Հէյբաթում։

Պատուէրների համար դիմել՝ քաղաքի գրասենեակը (Старо-Полицейская, տուն Արաֆելովի, տելիֆոն № 749), գործարան. տելիֆոն № 54, կամ Բիբի-Հէյբաթի բաժանմունքը՝ տելիֆոն № 451. (Ե. Հ. Շ)



ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑՉՈՒԹԻՒՆ

Ռուսաց և արտասահմանեան ֆիրմաների։

ԲԻՒՐՕՆ ՑԱՆՁՆ Է ԱՌՆՈՒՄ

կառուցանել

Ամեն տեսակ շինութիւններ, գործարաններ և գործատներ

ԳԱԶԱ-ՇՈԳԻԻ-ՋՐԱՆՑՔՆԵՐ

Ամեն տեսակ էլէկտրոտէխնիկական կառուցումներ և սարքեր, այսինքն հեռագիրների, տելիֆոնների, լուսաւորութեան, տրամվայների և ոյժի հաղորդելը հեռաւորութեան վրա։

ՑԻՆԱՐԱՐԱԿԱՆ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԻՒՐՕ

Ինժեներ Ն. Բ. Պասսէկի

Тифлисъ, Михайловская ул. № 116.

Հասցէն հեռագիրների համար. Тифлисъ—Пассеку.

ՏԵԼԻՖՕՆ № 642.



ԿԱՆԱԼԻԶԱՑԻԱ, ՎԵՆՏԻԼԵԱՑԻԱ և ՏԱՔԱՑՈՒՄԸ

ԴՆԵԼ, ԺՈՂՈՎԵԼ և ՍԱՐՔԵԼ

ամեն տեսակ

տիւրբիններ, խողովակներ, մեքենաներ և ջրհաններ։

ԿԱՌՈՒՑԱՆԵԼ

երկաթէ կամուրջներ

և տնակներ։

ՑԷՄԷՆՏԻ ՎԱՃԱՌՈՒՄՆ

(Ե. Հ. Շ.) 36—100

Եղբարք Ե. եւ Մ. Միրզաբէկեանցների
ԾԽԱԽՈՑԻ ԳՈՐԾԱՐԱՆ
ԲԱԳԻՈՒՄ

Ի նկատ առնելով, որ տարէց տարի մեր գործարանի ծխախոտի և պապիրոսի պահանջը գնալով մեծանում է, մենք, որպէս զի դիւրութիւն լինենք տուած մեր մշտական գնողներին՝ վրեռեցինք Թիֆլիսում (Հալաբարի կամուրջի մօտ, տուն Իսարլովի) բանալ սեփական խանութ, որտեղ կարելի է միշտ ստանալ ծխախոտի և պապիրոսի ամենաընտիր տեսակները։ Շնորհիւ այդ պահանջի, մենք հնարաւորութիւն ունենք ամենաընտիր պապիրոսներ և ծխախոտ ծախել աւելի էժան գներով։

Օտարաքաղաքացիք իրանց պատուէրներով դիմում են՝ Тифлисъ, табачный магазинъ Бр. Мирзабековыхъ.

Պատուէրները կատարվում են ճշդութեամբ և շուտ։ 2—10

Дозволено цензурою, Тифлисъ, 23 Сентября 1899 г.

Типографія Грузинск. Т.—ва Большая Ванкская ул., № 27.